403

1895

ԴԱՍԱՏԵՍՐ ԿՐՕՆԻ

«Եւ ուսուսցիք որդւոց ձերոց խօսել զսոսա ի նստել ի տան. եւ ի գնալ ի ճանապարհի եւ ի ննջել եւ ի յառնելոյ։

Վ. Մովս. ժա. 19.

ՀԱՄԱՁԱՅՆ ԾՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻՄԻՄԱՆՈՒԹԵՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմեց

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

(Միաբան Մողնւոյ Ս. Դէսրգ եկեղեցւոյ)

Ցարմար է կրօնուսոյցներին ձեռքի տակ ունենալ իմ «Դասապիրք կրօնի» նոր-ուխտի նիւթի մշակութիւնը։

5 տող

ՏՓԽԻՍ

Տպար. Մ. Շարաձէի եւ Ընկ. || Тип. М. Шарадзе и К°.

Никол. ул. № 21.

1895

2(075)
Ա-15

Арм.
2-6304а
2(075)
Ս-15
44630-ա.հ.

(Փոփոխած)

ԴԱՍԱՏԵՍՐ ԿՐՕՆԻ

«Եւ ուսուսջիք որդւոց ձերոց խօսել զսոսա ի նստել ի տան. եւ ի գնալ ի ճանապարհի եւ ի ննջել եւ ի յառնել»։
Վ. Մով. ժա. 19.

ՀԱՄԱՁԱՅՆ ԾՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻՄԽԱՆՈՒԹԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմեց

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(Միաբան Մողնւոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ)

Յարմար է կրօնուսոյցներին ժեռքի տակ ունենալ իմ «Դասագիրք կրօնի» նոր-ուխտի նիւթի մշակութիւնը։

Инв. № 17535

ՏՓԽԻՍ
Տպար. Մ. Շարաձէի եւ Ընկ. || Тип. М. Шарадзе и К°.
Никол. ул. № 21.
1895

Дозволено цензурою. Тифлисъ, 26 Мая 1895 г.

29586-63

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։

§ 1.

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Բեթանիա գիւղում մի հիւանդ կար՝ անունը Ղազարոս։ Նրա երկու քոյրերը՝ Մարիամը և Մարթան՝ մարդ ուղարկեցին Յիսուսի մօտ, որ ասէ. «Տէր, քո սիրելի Ղազարոսը. հիւանդ է»։ Յիսուս, երբ այս բանը լսեց, ասաց. «Այն հիւանդութիւնը մեռնելու հիւանդութիւն չէ»։ Բայց մինչև մարդիկը լուր կը-բերէին, Ղազարոսը մեռաւ։

Յիսուս երբ լսեց, թէ Ղազարոսը հիւանդ է, ասաց իւր աշակերտներին. «Եկէք գնանք Հրէաստան, մեր բարեկամ Ղազարոսը հիւանդ է»։ Յիսուս եկաւ Բեթանիա։ Արդէն չորս օր էր՝ որ թաղել էին խեղճին։ Ազգականներից շատերը եկել էին Մարիամի և Մարթայի մօտ՝ որ մխիթարեն նրանց։ Երբ Մարթան լսեց, թէ Յիսուս գալիս է, գնաց նրա առաջ, իսկ Մարիամը տանը մնաց։ Մարթան ասաց Յիսուսին. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի, բայց ես հաւատացած եմ, հիմա էլ ինչ որ Աստուածանից խնդրես, քո խօսքը կկատարէ»։ Յիսուս ասաց նրան. «Քո եղբայրը

յարութիւն կառնէ»։ Մարթան ասաց. «Գիտեմ որ յարութիւն կառնէ վերջին դատաստանի ժամանակ»։ Յիսուս կրկնեց. «Ես եմ յարութիւնն ու կեանքը, ով ինձ հաւատայ, եթէ մեռնի էլ, դարձեալ կապրի, դու հաւատո՞ւմ ես այս բանին»։ Մարթան պատասխանեց. «Այո՛, Տէր, ես հաւատացել եմ, որ դու ես Աստուծու որդի Քրիստոսը, որ աշխարհ պիտի գայիր»։

Մարթան այս ասելուց յետոյ գնաց և թաքուն կանչեց Մարիամին և ասաց. «Վարդապետը եկել է, կանչում է քեզ»։ Մարիամը, երբ այս խօսքերը լսեց, շուտով վերկացաւ և գնաց։ Այն հրէաները, որոնք տանն էին և սգաւորներին մխիթարում էին, երբ տեսան որ Մարիամը վեր կացաւ և գնաց, իրանք էլ նրա ետևից գնացին՝ այնպէս կարծեցին, թէ գնում է գերեզմանի վրայ լաց լինելու։

Մարիամը, երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»։ Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկող հիւրերին տեսաւ, որ լալիս են, սիրտը լցուեց և ասաց. «Ո՞ւր դրիք ննջեցեալը»։ Նրանք պատասխանեցին. «Տէր, արի և տես»։ Յիսուս արտասուեց։ Հրէաներն ասում էին. «Տեսէք ինչպէս է սիրում նրան»։ Մի քանիսն էլ ասում էին. «Մի-

թէ սա չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»։

Յիսուս գերեզմանի մօտ գնաց և ասաց. «Վեր առէք գերեզմանի քարը»։ Մարթան ասաց. «Տէր, արդէն հոտած կլինի, որովհետև չորս օրուան թաղած է»։ Յիսուս ասաց. «Մարթա, չասացի՞ քեզ, եթէ հաւատաս, Աստուծու փառքը կտեսնես»։

Քարը վեր առան։ Յիսուս աչքերը երկինք բարձրացրեց և ասաց. «Հայր, շնորհակալ եմ քեզնից, դու ինձ միշտ լսել ես. խընդրում եմ, այս անգամ էլ լսես, որ այս ժողովուրդը հաւատայ, թէ դու ես ուղարկել ինձ»։ Այս ասաց և բարձր ձայնով աղաղակեց. Ղազարէ՛, արի՛, դուրս եկ»։ Մեռելն իսկոյն դուրս եկաւ՝ ձեռներն ու ոտները պատանքի մէջ կապած, իսկ երեսը վարշամակի մէջ փաթաթած։ Յիսուս ասաց. «Արձակեցէք կապերը և թողէք որ գնայ»։ Մարիամի հետ եկած հրէաներից շատերը տեսան Յիսուսի արածը և հաւատացին նրան։

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԸ

Կենդանութեանց ըաշխող Քրիստոս
Ի Բեթանիա եկաւորեալ այսօր,

Բարեկամին Ղազարու
Պարգեւէ զկենդանութիւն։

Կեանք բաշխող Քրիստոսը Բեթանիա գալով այսօր՝ (իւր) բարեկամ Ղազարոսին կեանք պարգևեց։

Տընօրինաբար արտասուելով՝
Ընդ Մարթայի եւ ընդ Մարիամու
Ողբակցէր եւ որպէս մարդ հարցանէր.
Ո՞ւր եղիք զՂազարոս։

Կարեկցաբար արտասուելով՝ Մարթայի և Մարիամի հետ ողբում էր և ինչպէս մարդ, հարցնում էր. «Ո՞ւր դրիք Ղազարոսին»։

Եւ որպէս զԱստուած բարբառով
Ցարուցանէ ի մեռելոց զչորեքօրեայն
Եւ զուզընթաց ձայնին մեռեալն
Եկն արտաքս անապական։

Եւ իբրև Աստուած՝ խօսքով յարութիւն է տալիս չորս օրուայ մեռածին և ձայն տալուն պէս՝ մեռելը դուրս է գալիս անապական մարմնով։

§ 2.

ՏԱՍՆ ԿՈՅՍԵՐ

Հին ժամանակ հրէաների մէջ հարսանիքն այսպէս էր—փեսան չէր գալիս հարսի մօտ և տուն տանում, այլ՝ հարսի ընկերուհիներից տասն կոյս աղջիկ՝ կէս գիշերին դուրս

էին գալիս փեսայի առաջ՝ հարսի հետ։ Աղջիկները ձեռներին ձողեր էին բռնում՝ ծայրից լապտեր կախած։ Բացի դրանից հետներն ամանով աւելորդ ձէթ էլ էին վերցնում, որ եթէ փեսան ուշանալու լինի, լապտերի մէջ ածեն։ Փեսան էլ իւր տանից էր դուրս գալիս և ընկերների հետ միասին գալիս էին հարսի առաջ։ Երկու խմբերը պատահում էին իրար փողոցի մէջ։

Այսպէս մի անգամ տասն կոյս աղջիկ իրանց լապտերները վեր առան և գնացին փեսայի առաջ։ Նրանցից հինգը յիմար, այսինքն անզգոյշ էին, իսկ հինգը իմաստուն, այսինքն զգոյշ էին։ Յիմարները մոռացան իրանց լապտերների հետ աւելորդ ձէթ վերցնել, իսկ իմաստունները՝ վերցրին։ Փեսան ուշացաւ. ամենի քունը տարաւ։

Կէս գիշերին ձայն բարձրացաւ, թէ փեսան գալիս է։ Կոյսերը վերկացան և լապտերները պատրաստեցին։ Յիմարների լապտերների մէջ ձէթ չկար, քիչ էր մնում, որ հանգչի, այս պատճառով խնդրեցին իմաստուններին. «Ձեր ձէթիցը մեզ էլ տուէք, որովհետև մեր լապտերները հանգչում են»։ Իմաստունները պատասխանեցին. «Մի գուցէ մեզ և ձեզ բաւական չլինի, աւելի լաւ է ծախողնե-

րի մօտ գնացէք և ձեզ համար ձէթ գնեցէք։

Երբ նրանք գնացին ձէթ առնելու, փեսան եկաւ և պատրաստ գտնուողները նրա հետ մտան հարսանիքի տունը և դուռը փակուեց։ Յետոյ միւս կոյսերն էլ եկան և ասացին. «Տէր, Տէր, բաց արա դուռը»։ Փեսան պատասխանեց և ասաց. «Ճշմարիտն եմ ասում, որ ես ձեզ չեմ ճանաչում»։

ՏԱՍՆ ԿՈՅՍԵՐԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Իմաստուն կուսանքն
Պատրաստեալ իւղ լապտերաց,
Ելին ընդ առաջ երկնաւոր փեսային
Վառեալ լապտերօք

Իմաստուն կոյսերը լապտերների համար իւղ վերցնելով՝ վառած լապտերներով դուրս եկան երկնաւոր փեսայի առաջ։

Իսկ յիմարաց կուսիցն
Ունայնացեալք ի յիւղոյ
Անպատրաստ գտան զալստեան փեսային

Շիջեալ լապտերօք։

Իսկ յիմար կոյսերը հետները իւղ վերցրած չլինելով՝ անպատրաստ գտնուեցան փեսայի գալստեան, որովհետև լապտերները հանգած էին։

Վասն որոյ եւ մեք
Պատրաստեսցուք իւղ հոգեւոր,
Զի մոցուք ի յառաջաստ անմահ փեսային
Վառեալ լապտերօք։

Այս պատճառով էլ մենք հոգեւոր իւղ պատրաստենք, որպէսզի վառած լապտերներով կարողանանք մտնել անմահ փեսայի առաջաստը (հարսանիքի տունը)։

§ 3.

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Հրէաներից մի քանիսը գնացին փարիսեցիների, այսինքն այդ երկրի իմաստուն մարդկանց մօտ և պատմեցին, թէ ինչպէս Յիսուս Ղազարոսին յարութիւն տուաւ։ Քահանայապետներն ու փարիսեցիներն իսկոյն ժողով արին և ասացին. «Ի՞նչ անենք, այն մարդը շատ հրաշքներ է անում, եթէ այդպէս թողնենք, ամենքն էլ նրան կհաւատան»։ Նրանցից մինը՝ որի անունը Կայիափա էր, ասաց. «Դուք ոչինչ չգիտէք և հեռուն չէք էլ մտածում. աւելի լաւ է Յիսուսին սպանենք՝ քան թէ թողնենք, որ այսպէս քարոզէ և ամենին էլ մոլորեցնէ»։ Այն օրից սկսած՝ քահանայապետը և փարիսեցիները խորհուրդ

արին, որ սպանեն նրան։ Այս պատճառով հրաման ուղարկեցին ամեն տեղ, որ ով Յիսուսի տեղն իմանայ, իմաց տայ իրանց, որ բռնեն։

Կրկնել—Յուդա—ա. տարի երես 17։ Ոտնալուայ՝ 18, խորհրդաւոր ընթրիք, պատարագ՝ 20—22։ Յիսուս Գեթսէմանի պարտիզում, Յիսուսի մատնութիւնը, Յիսուս քահանայապետի առաջ, Յուդայի մահը՝ 23—25. Յիսուս Պիղատոսի առաջ՝ 26 եւ ապա

ՇԱՐԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ

Նոր սքանչելիք այսօր տեսանեմք յաշխարհի ի մէջ հողեղինաց—արարածք արարչին սպանութեան խորհին զխորհուրդ։

Այսօր աշխարհում՝ հողեղէնների մէջ նոր սարսափելի բան ենք տեսնում—արարածները խորհում են Արարչին սպանելու խորհուրդը։

Որ քանիւն իւրով զերկինս եւ զերկիրս հաստատեաց յոչնչէ գոյացուցեալ, վաճառի այսօր դիւրագին ընդ երեսուն արծաթոյ։

Նա՝ որ երկինքն ու երկիրը իւր խօսքով հաստատեց՝ ոչնչից ստեղծելով, այսօր վաճառւում է դիւրագին—30 արծաթով։

Ո՜վ Յուդաս արտասուելի, երկնաւոր վարդապետին սպանութեան խորհի զխոր-

հուրդ, մատնելով անօրինաց, զի խաչեսցի ի մէջ երկրի:

Ո՜հ, լացի արժանի Ցուդան երկնաւոր վարդապետի սպանութեան խորհուրդն է խորհում, մատնելով նրան անօրէնների ձեռը, որ խաչուի երկրիս վրայ։

§ 4.

ՈՏՆԱԼՈՒԱՑ

Կրկնել—ա. տարի, երես 18-ի համապատասխան մասը եւ ապա

ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Արծաթասիրութեամբն մոլեալ Ցուդա զիւր զմեծ զվարդապետն ընդ երեսուն արծաթոյ հրէիցն մատնէր:

Արծաթասիրութիւնով կուրացած՝ Ցուդան իւր մեծ ուսուցչին հրէաներին էր մատնում 30 արծաթով։

Ընդ որում՝ ես համբուրեցից, ասէ, զնա կալարուք. ո՞վ համբոյր նենգութեան, նշան եւ առիթ մահու:

Ում որ ես համբուրեմ, ասում է Ցուդան, նրան բռնեցէք. ո՛վ խարդախութեան համբոյր, դու նշան և պատճառ ես մահուան։

Մերկացաւ յինքենէ զԱստուածային սուրբ հոգին եւ զգեցաւ զսատանայ որպէս զհանդերձ արկաւ զիւրեաւ:

Ցուդան մերկացաւ (հեռացրեց իրանից) աստուածային սուրբ հոգին և հագաւ սատանային՝ (չարութիւնը) ինչպէս զգեստ։

§ 5.

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Կրկնել (տես ա. տարի գ. տիպ. § 17. երես 32) եւ ապա

ԹԱՂՄԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Ցովսէփ ճշմարիտ եւ արդար հայցէր ի Պիղատոսէ զհասարակաց զպարգեւատուն, որ տուաւ մեզ զանձ անկողոպտելի:

Ճշմարիտ և արդար Ցովսէփը խնդրում է Պիղատոսից ամենից պարգև տուողին (Յիսուսին), որ շնորհուեցաւ մեզ (Աստուածանից) որպէս անկողոպտելի զանձ։

Պատեալ սուրբ կտաւովք զմարմինն տէրունական՝ զարկողն զլոյս որպէս զօթոց, որ զգեցոյց մեզ զգեստ անկողոպտելի:

Սուրբ կտաւով պատելով տէրունական մարմինը, որի ծածկոյթն է լոյսը և որը հագցրեց մեզ անկողոպտելի (անապական) զգեստ։

*Եղաւ ի նորափոր ի վիմի եւ մատանեաւ կնքեցաւ *), որ զնախաստեղծն կեն-*

---

*) Տես իմ «Դասագիրք կրօնի» II հատ. § 47.

ղանացոյց եւ զմարդկան կապանս մահու ելոյծ։

Դրուեցաւ նոր փորուած գերեզմանի մէջ և մատանիքով կնքուեցաւ. նա՝ որ առաջին մարդուն (Ադամին) կեանք տուաւ և մարդկանց մահուան կապանքները քանդեց։

§ 6.

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կրկնել—(տես ա. տարի դ. տիպ. § 18 երես 33) եւ ապա

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Ընդ արշալոյսն առաւօտուն
Կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով՝
Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Կանայքն առաւօտեան արշալուսին վաղ գերեզման գնացին ասելով՝ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ։

Եւ առ նոսա ասէր հրեշտակն.
Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս՝
Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Հրեշտակն ասում է նրանց. «Կենդանին մեռելների մէջ ինչու էք որոնում, Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ։

Փութացարուք, ո՞վ սուրբ կանայք,

Եւ պատմեցէք աշակերտացն ասելով՝
Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Շտապեցէք, ով սուրբ կանայք և պատմեցէք աշակերտներին ասելով՝ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ։

§ 7.

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Յարութիւնից յետոյ Յիսուս քառասուն օր էլի մնաց երկրիս վրայ. նա երբեմն երբեմն գալիս էր իւր աշակերտների մօտ։ Սրանից յետոյ Յիսուս առաքեալների հետ Ձիթենեաց լեռը բարձրացաւ. այնտեղ պատուէր տուաւ նրանց և ասաց. «Երուսաղէմից չհեռանաք, այլ սպասեցէք մինչև հայր Աստուած ձեզ աւետիք կուղարկէ. սուրբ Հոգին երկնքից ձեզ վրայ կիջնէ և դուք զօրութիւն կըստանաք. յետոյ կերթաք, կքարոզէք Երուսաղէմում, Հրէաստանում և միւս երկրներում և ամենն տեղ կվկայէք իմ մասին։ Ուրեմն գնացէք և բոլոր ազգերին սովորցրէք Հօր, Որդւոյ և սուրբ Հոգւոյ անունով։ Սովորեցրէք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ պատուիրեցի։ Ով կհաւատայ և կմկրտուի, նա կազատուի, իսկ ով չի հաւատայ, նա կպատժուի։

Երբ այս ասաց, բարձրացրեց ձեռները և օրհնեց նրանց։ Օրհնելու ժամանակ բաժանուեց նրանցից և երկինք բարձրացաւ։ Մի ամպ եկաւ և ծածկեց նրան՝ այնպէս որ աշակերտներն այլ ևս չտեսան Յիսուսին։ Նրանք երկրպագեցին ու մեծ ուրախութիւնով յետ դարձան Երուսաղէմ. ամեն օր տաճարում օրհնում էին Աստուծուն և սպասում էին սուրբ Հոգուն։

Համբարձման տօնը կատարում ենք Զատկից 40 օր յետոյ։

§ 8.

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Համբարձումից յետոյ առաքեալները դարձան Երուսաղէմ և միասին էին։ Տասն օրից յետոյ երկնքից յանկարծակի մի ձայն լսուեց սաստիկ փչող քամու նման և լցրեց տունը, ուր նստած էին։ Յետոյ առանձին առանձին կրակի նման լեզուներ երևացին և այդ լեզուներից ամեն մինը իջաւ նրանց իւրաքանչիւրի վրայ։ Իսկոյն սուրբ Հոգուով լցուեցան և սկսեցին զանազան լեզուներով խօսել։

Բացի տեղացիներից Երուսաղէմում բնակւում էին շատ աստուածավախ հրէաներ, ո-

29586-67

րոնք եկել էին աշխարհիս ամեն կողմից։ Երբ երկնքից իջնող ձայնը լսուեց, ժողովուրդն եկաւ և միասին հաւաքուեցաւ, ամենքը զարմացած լսում էին, թէ ինչպէս առաքեալները ուրիշ-ուրիշ լեզուներով էին խօսում։ Ոչ ոք չէր հաւատում իւր տեսածին, սրա համար էլ մինը միւսին հարցնում էր. «Չէ՞ որ այս խօսողները բոլորն էլ գալիլիացիներ են. տեսէ՛ք ի՞նչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստուծու մեծամեծ գործերը— այս ի՞նչ պիտի լինի»։ Իսկ ոմանք էլ ծաղրում էին և ասում. «Երևի սրանք հարբած են»։

Պետրոս առաքեալի քարոզը։ Այն ժամանակ Պետրոսը տեղից վերկացաւ և սկսեց այսպէս խօսել. «Ո՛վ հրէաստանցիներ և Երուսաղէմում բնակուողներ, լաւ լսեցէ՛ք ինչ որ ես ձեզ քարոզելու եմ. սրանք հարբած չեն, ինչպէս որ կարծում էք, որովհետև դեռ ևս առաւօտեան ժամի 9-ն է։ Լսեցէ՛ք, ո՛վ իսրայէլացիներ, Աստուած Յիսուս Նազովրեցուն աշխարհ ուղարկեց. նա եկաւ և ձեր մէջ հրաշքներ գործեց. թէև դուք նրան խաչեցիք, բայց Աստուած երեք օրից յետոյ յարութիւն տուաւ»։

Երբ այս քարոզը լսեց ժողովուրդը, զղջաց իւր սրտում։ Շատերը գալիս էին Պետ-

Ղ. Ա. Մաղաքիայի անվան գրադարան

ըոսի և միւս առաքեալների մօտ և ասում էին. «Ի՞նչ անենք»։ Պետրոսն էլ ասում էր նրանց. «Ապաշխարեցէք, և մկրտուեցէք Յիսուս Քրիստոսի անունով։ Ով կմկրտուի, սուրբ Հոգւոյ շնորհը կընդունի»։ Այն օրը երեք հազար մարդ հաւատաց Պետրոսի խօսքերին և մկրտուեց։

Հոգեգալստեան տօնը կատարում ենք Զատկից 50 օր յետոյ։

ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Այսօր երկնայինքն ուրախացան
Ընդ երկրաւորաց նորոգմանն,
Քանզի նորոգողն էից հոգին էջ ի սուրբ
վերնատունն,
Որով նորոգեցան դասք առաքելոցն։

Այսօր երկնայիններն (հրեշտակները) ուրախացան երկրումը բնակուողներիս (մարդկանց) նորոգուելու համար, որովհետև էակներին նորոգող սուրբ Հոգին իջաւ վերնատուն և առաքեալների դասը նորոգեց։

Այսօր հողանիւթեայ ընութիւնս ցնծայ
Ընդ հօր հաշտութեան,

Քանզի որ երարձ զհոգին ի մարդկանէ մարմին եղելոց.
Դարձեալ վերստին զնոյն պարգեւէ։

Այսօր մեր հողեղէն բնութիւնը ուրախանում է հայր Աստուծու (մարդկանց հետ) հաշտուելու վրայ, որովհետև նա՝ որ իլեց մարդկանցից մարմին դարձած հոգին (Նոյի ժամանակ), կրկին անգամ նոյն (հոգին) պարգևում է (մարմին) դարձածներին —(մարդոց) *)։

Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցընծութեամբ
Զգալուստ սուրբ Հոգւոյն.
Որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս եւ զերապայծառս
Երգեն ընդ սրովբէսն զերեքսրբենին։

Այսօր եկեղեցւոյ մանուկներն ուրախութեամբ տօնում են սուրբ Հոգւոյ գալուստը, որի շնորհիւ զարդարուեցան լուսափայլ և գերապայծառ զգեստներով, (ուստի) երգում են սրովբէների հետ Երեքսրբենին (սուրբ, սուրբ երգը)։

---

*) Մարդիկ ուրախանում են, որ հայր Աստուած մարդոց հետ հաշտուեց, որովհետև Նոյի ժամանակ մարդիկ վատացել էին. Աստուած էլ իւր հոգին նրանցից վերացրել էր, իսկ այսօր նոյն հոգին պարգևում է։

§ 9.

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

Յիսուս խաչի վրայից ասաց Յովհաննէս առաքեալին, որ իւր մօրը խնամք տանէ։ Այն օրից սկսած Մարիամը 16 տարի շարունակ Յովհաննիսի մօտ էր՝ մինչև իւր մահը։

Երբ սուրբ կոյս Մարիամը մեռաւ, առաքեալները թաղեցին նրան Գեթսեմանում, որտեղ Յուդան Յիսուսին զինուորների ձեռը մատնեց։ Աստուածածնի մահուան ժամանակ բոլոր առաքեալները՝ բացի Բարդուղիմէոսից, Երուսաղէմումն էին։ Երբ Բարդուղիմէոսը Երուսաղէմ եկաւ և իմացաւ Տիրամօր մահը, խիստ տխրեց և ցանկացաւ տեսնել նրա գերեզմանը։ Առաքեալները նրան Գեթսեմանի պարտէզը տարան, բայց ո՛րքան զարմացան, երբ գերեզմանը բաց արին և ոչինչ չգտան, որովհետև Յիսուս Քրիստոս հրեշտակների ձեռով իւր մօր մարմինը երկինք էր տարել, այսինքն վերափոխել էր։

Բարդուղիմէոս առաքեալը շատ էր ցաւում, որ չկարողացաւ ո՛չ Տիրամօրը տեսնել և ո՛չ նրա մարմինը։ Միւս առաքեալները, Բարդուղիմէոսին մխիթարելու համար՝ Աստուածածնի պատկերն ընծայեցին նրան։ Բար-

դուղիմէոս առաքեալը մի վանք շինեց և այս պատկերն այնտեղ դրաւ։

Մեր եկեղեցին տօնում է այդ օրը՝ երբ հրեշտակները սուրբ կոյս Մարիամի մարմինը երկինք տարան, այսինքն վերափոխեցին և դրա համար էլ այդ տօնի անունը վերափոխումն է։

Այդ օրը եկեղեցի ենք գնում և խընդրում ենք Աստուածածնից, որ բարեխօս լինի իւր որդի Յիսուս Քրիստոսի մօտ մեր աղօթքը լսելու, դրա համար էլ եկեղեցում երգում ենք.

«Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո զաղաչանս մեր որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ»։

Ո՛վ դու փառաւորուած և օրհնուած միշտ սուրբ կոյս՝ Քրիստոսի մայր՝ Մարիամ Աստուածածին, մեր աղօթքը հասցրու քո Որդուն՝ մեր Աստուծուն։

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Անկանիմք առաջի քո Աստուածածին եւ աղաչեմք զանարատ զկոյսդ։

Քո առաջն ենք ընկնում (երկրպագութիւն, տալիս) ով Աստուածածին և աղաչում ենք քեզ՝ անարատ կոյսիդ։

Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց եւ աղաչեա՛ զՄիածին որդին։

Բարեխօսիր մեզ համար և աղաչիր Միածին որդուն։

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց։

Որպէսզի ազատէ մեզ փորձութիւնից և ամեն տեսակ վտանգից։

Վերափոխման տօնին եկեղեցում խաղող ենք օրհնում։

§ 10.

ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԸ ԴԵՍՊԱՆՆԵՐ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԻՍՈՒՍԻ ՄՕՏ

Հայոց Աբգար թագաւորը եօթը տարի շարունակ հիւանդ էր. ամեն տեսակ դեղեր գործ էր դրել, բայց չէր առողջացել։ Աբգարը լսեց, որ Հրէաստանում Յիսուս առանց դեղի բժշկում է ամեն տեսակ հիւանդու-

թիւններ, այդ պատճառով նամակ գրեց և դեսպանների ձեռով ուղարկեց, որ գայ և իրան բժշկէ։ Ահա՛ Աբգարի գրած նամակը. «Ես լսել եմ, որ դու առանց դեղի բժշկում ես հիւանդներին. կոյրերի աչքը բաց ես անում. կաղերին ոտ ես տալիս. բորոտներին սրբում ես. սատանաներին հալածում ես. երկար ժամանակ հիւանդութիւն ունեցողներին առողջացնում ես և մինչև անգամ մեռելներին յարութիւն ես տալիս։ Երբ ես այս բոլորը լսեցի, ինքս ինձ ասացի, որ դու կամ երկնքից իջած Աստուած ես և կամ Աստուծու որդի։ Աղաչում եմ քեզ, արի՛ և ինձ բժշկիր։ Լսեցի նոյնպէս, որ հրէաները քեզ նեղացնում են. ես մի փոքրիկ քաղաք ունեմ, ե՛կ ինձ մօտ, երկուսիս էլ բաւական է։ Քեզ այստեղ ոչ ոք չի նեղացնի»։ Վերջը պատուիրեց դեսպաններին և ասաց, որ եթէ Յիսուս չկարողանայ գալ, պատկերը քաշեն և իրան բերեն։ Այս բանի համար մի նկարիչ ուղարկեց։

Դաստառակ։ Դեսպանները նամակը Յիսուսին տարան։ Նա չկարողացաւ գալ և մեր Աբգար թագաւորին այս պատասխանը գրեց. «Երանի՛ նրան՝ ով ինձ չէ տեսել, բայց հաւատում է։ Գրում ես, որ քեզ մօտ գամ,

չեմ կարող, որովհետև ես չեմ եկել հանգիստ ապրելու, այլ՝ չարչարուելու և խաչուելու։ Երբ այս բոլորը վերջացնեմ, յետոյ Հայր Աստուծու մօտ պիտի գնամ։ Իսկ իմ համբարձումից յետոյ աշակերտներիցս մինին կուղարկեմ, որ գայ քեզ բժշկէ և քո ժողովրդին էլ կեանք պարգևէ»։

Նկարիչը երբ տեսաւ, որ Յիսուս չէ գալիս, սկսաւ նրա պատկերը նկարել, բայց չէր կարողանում։ Յիսուս նկարչին իւր մօտ կանչեց. մի կտոր մաքուր կտաւ առաւ. երեսին ծածկեց և նրա վրայ նկարուեց իւր պատկերը։ Յետոյ նկարչին տուաւ, որ Աբգարին տանէ։ Այս պատկերը կոչւում է դաստառակ կամ անձեռագործ պատկեր։

§ 11.

ԹԱԴԷՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ

Յիսուս բացի 12 առաքեալներից՝ 72 աշակերտ էլ ունէր։

Համբարձումից յետոյ աշակերտներից մինը՝ Թադէոս անունով, Հայաստան եկաւ։ Երբ Թադէոսն Աբգարի պալատը մտաւ, Թագաւորը երեսի վրայ ընկաւ և երկրպագութիւն տուաւ նրան։ Թադէոսը քարոզեց Թագաւորին,

բոլոր քաղաքացիներին և ասաց, որ Քրիստոսի ասածները կատարեն։ Աբգարի գլխին ձեռը դրաւ և բժշկեց. նոյնպէս քաղաքի բոլոր հիւանդներին։ Այս բանը որ տեսան քաղաքացիները, հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան։ Ս. Թադէոսը երկար ժամանակ չըմնաց այնտեղ—նա միւս առաքեալների նման պիտի մանգար զանազան տեղեր և քարոզէր, այս պատճառով Թագաւորի Թագ շինող Ադդէին եպիսկոպոս ձեռնադրեց և հովիւ նշանակեց այս նոր քրիստոնեաների վրայ։ Թադէոսը Աբգարից հրաման առաւ և գնաց Հայաստան՝ Թագաւորի քրոջորդի Սանատրուկի մօտ, քարոզեց նրան և իւր մարդկանցը և ամենին էլ մկրտեց։ Սանատրուկի աղջիկ Սանդուխտին էլ մկրտեց։

Սանատրուկը շատ կարճ ժամանակ քրիստոնեայ մնաց—հենց Աբգարի մահուանից յետոյ ուրացաւ քրիստոնէութիւնը և սկսաւ չարչարել քրիստոնեաներին ու նահատակել։ Իւր Սանդուխտ աղջկան շատ ասաց, որ ուրանայ քրիստոնէութիւնը, բայց նա չլսեց։ Սանդուխտ կոյսը պատասխանեց, որ կուռքերին ոչ մի ժամանակ երկրպագութիւն չեմ տայ, կըմեռնեմ կուռք չեմ պաշտի։ Հայրը իւր աղջկան նահատակել տուաւ։ Բայց սրանով չը-

բաւականացաւ — որովհետև Սանդուխտ կոյսը Ս. Թադէոսից էր ուսել քրիստոնէութիւնը, այս պատճառով նրան էլ նահատակել տուաւ։

Այսպէս՝ թէ ուսուցիչը և թէ աշակերտուհին լաւ համարեցին մեռնել՝ քան թէ կուռք պաշտել։

Ս. Թադէոսի մահուանից յետոյ՝ Յիսուսի աշակերտներից մի ուրիշը ևս եկաւ Հայաստան, որ քրիստոնէութիւնը քարոզէ—սրա անունն էր Բարդուղիմէոս։ Սա բերաւ իւր հետ Ս. կոյս Մարիամի պատկերը. Տիգրիս գետի ափին մի վանք շինեց՝ Աստուածածին անունով և այն պատկերն այնտեղ դրաւ։

Ս. Թադէոս և Բարդուղիմէոսն առաջին անգամ եկան մեր երկիրը քրիստոնէութիւնը քարոզելու և լուսաւորելու հայերին, սրա համար էլ նրանց անուանում ենք առաջին (նախկին) լուսաւորիչներ։ Որովհետև նրանք այդպիսի գեղեցիկ օրինակ են թողել մեզ համար, մենք էլ ամեն տարի նրանց անունը յիշում ենք եկեղեցում և տօն կատարում։ Այդ օրը երգում ենք.

ՇԱՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՅ

Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք եւ բարձր աշտարակք. ոսկեղէն բաժակք եւ ժիր մատռուակք Հայաստանեայց, հարք հոգեւորք, Բարդուղիմէոս եւ Թադէոս, բարեխօս լերուք առ տէր վասն անձանց մերոց։

Հայրատունկ այգու (եկեղեցու) հրեղէն պարիսպներ և բարձր աշտարակներ, ոսկեղէն բաժակներ և ժիր մատռուակներ—ով դուք հայաստանցիներիս հոգևոր հայրեր, Թադէոս և Բարդուղիմէոս, բարեխօս եղէք տիրոջ առաջ մեզ համար։

Թագաւոր երկնաւոր,
Զեկեղեցի քո անշարժ պահեա՛,
Եւ զերկրպագուս անուանդ քում՝
Պահեա՛ ի խաղաղութեան։

Երկնաւոր թագաւոր (Յիսուս), քո եկեղեցին անշարժ պահիր. քո անուան երկրպագութիւն տուողներին խաղաղութեան մէջ պահիր։

§ 12.

Ս. ԳՐԻԳՈՐ (կամ երկրորդ) ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Անակի Հայաստան գալը։ Պարսից Արտաշիր թագաւորը մի օր իւր պալատականների

հետ այսպէս խօսեց—Ով Հայոց Խոսրով թագաւորին սպանէ, ինչ կամենայ, ինձնից կըստանայ։ Անակ անունով մինը՝ խոստացաւ Արտաշրի ցանկութիւնը կատարել։ Սա վերցրեց իւր ընտանիքը. հասաւ Հայաստանի սահմանը և այնպէս ձևացաւ՝ որպէս թէ Պարսից թագաւորն իրան հալածում է և մեր թագաւորից պաշտպանութիւն խնդրեց։ Խոսրովն Անակին սիրով ընդունեց։ Նա այնպէս էր կարծում, որ փախստականը շատ տեղեկութիւններ կյայտնէ Արտաշրի զօրքի և նրա բոլոր գործերի մասին, այս պատճառով Անակին՝ հէնց իւր պալատում տեղ տուաւ։ Այնուհետև Արտաշրի լրտես Անակը նրա մասին էր մտածում, թէ ինչպէս սպանէ մեր թագաւորին։

Խոսրովի մահը։ Մի օր Խոսրովը որսի գնաց իւր պալատականների հետ։ Անակին էլ հետն առաւ։ Որսի ժամանակ Անակը Խոսրովին փոքր ինչ հեռու տարաւ՝ որպէս թէ ծածուկ բան ունի ասելու։ Այստեղ սրով խփեց թագաւորին, իսկ ինքը ձի նստաւ և սկսաւ փախչել։ Մարդիկ ետևից ընկան։ Անակը փախաւ, ձգեց իրան Երասխ գետը և խեղդուեց։ Խոսրովը դեռ չէր մեռել,

որ հրամայեց Անակի ընտանիքը կոտորել։ Թագաւորի հրամանը կատարուեց—նրա ընտանիքը սրի անցրին, միայն մանուկ Գրիգորին իւր Սոփիա դայեակը փախցրեց և տարաւ Կեսարիա քաղաքը։

Երբ Արտաշրին լուր հասաւ, թէ Անակն սպանել է Խոսրովին, մեծ զօրք առաւ և եկաւ Հայաստան, որ Խոսրովի տունը ջնջէ։ Հայերը չկարողացան պարսիկների դէմ կռուել։ Արտաշիրը մտաւ մեր երկիրը և հրամայեց Խոսրովի ընտանիքը կոտորել։ Այսպէս էլ արին։ Մի տղայ միայն՝ Տրդատ անունով, հազիւ կարողացան փախցնել և Հռովմ քաղաքը տանել։

Գրիգորը Կեսարիայում եւ Հռովմում։ Սոփիան Գրիգորին պահում էր Կեսարիայում։ Փոքր ինչ որ մեծացաւ, նրան ուսումնարան ուղարկեց, ուր սովորում էր յունարէն և ասորերէն։ Սոփիան ինքը քրիստոնեայ էր, փոքրիկ Գրիգորին սովորցրեց, ինչ-որ հարկաւոր էր քրիստոնէական կրօնի համար։ Երբ Գրիգորը չափահաս դարձաւ, ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ հետ և նրանից երկու որդի ունեցաւ՝ Վրդաննէս և Արիստակէս։ Սրանից յետոյ Մարիամի համաձայնութեամբ

Գրիգորը բաժանուեցաւ նրանից։ Մարիամը կուսանոց մտաւ։

Գրիգորին պատմեցին, որ իւր հայր Անակը սպանել է Խոսրով թագաւորին, որի որդի Տրդատը Հռովմումն է, սրա համար էլ վեր կացաւ և գնաց այն քաղաքը, որ իւր մեղաւոր հօր փոխարէն Տրդատի մօտ ծառայութիւն անէ և սրանով հօր մեղքերը փոքր ինչ թեթևացնէ։

Տրդատի գաչագործութիւնները։ Խոսրովի որդի Տրդատն էլ Հռովումն էր մեծանում Դիոկղետիանոս կայսեր մօտ։ Երբ հասակն առաւ, զինուորական ծառայութեան մէջ մտաւ։ Տրդատը մեծ ոյժ ունէր, լաւ ձի նստել և զէնք գործածել գիտէր։ Մի անգամ ձեռով բռնեց եզան եղջիւրը և քաշեց, հանեց։ Մի անգամ էլ ընկերի հետ կառք էին քշում. ընկերը դիտմամբ Տրդատին կառքից վայր ձգեց, բայց սա ետևից վազեց և կառքից այնպէս բռնեց, որ ձիերն էլ չկարողացան առաջ գընալ։ Մի անգամ էլ Հռովմ քաղաքի Դիոկղետիանոս կայսրը պատերազմ ունէր։ Թշնամին մարդ ուղարկեց և այսպէս էր ասում—փոխանակ զօրքով մէկ մէկու հետ կռուենք և իզուր տեղը մարդիկ սպանենք, արի ես և դու

մենամարտենք—եթէ ես քեզ յաղթեմ, դուք ամենքդ ինձ ծառայ եղէք, իսկ եթէ դու ինձ յաղթես, մենք ամենքս քեզ հարկ տանք։

Դիոկղետիանոսն այս բանից խիստ վախեցաւ և չգիտէր, թէ ինչ անէ։ Կայսեր զօրավարներից մէկն ասաց. «Տէր թագաւոր, ամենևին մի մտածիր այդ մասին, իմ գնդի մէջ հայոց թագաւորի ցեղից մի տղայ կայ՝ անունը Տրդատ, նա կարող է քեզ ազատել և Տրդատի մասին շատ բաներ պատմեց։ Դիոկղետիանոսն իսկոյն Տրդատին իւր մօտ կանչել տուաւ. թագաւորական զգեստ հագցրաւ. թագաւորի նշաններով զարդարեց և ամեն տեղ ասել տուաւ, որ նա կայսրն ինքն է։ Միւս օրը թշնամու թագաւորի մօտ մարդ ուղարկեց ասելու, որ վաղն իրար հետ կմենամարտեն։ Երկրորդ օրը Տրդատը ձի նստեց. քշեց թշնամու կողմը. յարձակուեց նրա վրայ. բռնեց և Դիոկղետիանոսի մօտ բերաւ։ Կայսրը չափից դուրս ուրախացաւ։ Երբ իմացաւ, որ իրան ազատողը հայոց թագաւոր Խոսրովի որդին է, թագաւորական զգեստ հագցրաւ. գլխին թագ դրաւ. հռովմէական զօրք տուաւ, որ գնայ Հայաստան և իւր հօր փոխարէն թագաւորէ։

Տրդատը հասաւ Կեսարիա քաղաքը. Գր-

բիգորը նրա հետն էր։ Հայ նախարարները, երբ իմացան, որ իրանց թագաւորի որդին զօրքով գալիս է, եկան, միացան նրա հետ, որպէսզի պարսիկներին միասին դուրս անեն մեր երկրից։

Ս. Գրիգորին ձգում են Խորվիրապ։

Տրդատը հասաւ Երիզա քաղաքը։ Այստեղ մի չաստուածուհի կար՝ անունը Անահիտ, որին մեր պապերը պաշտում էին։ Այստեղ Անահտին գոհ բերին և խնդրեցին, որ յաջողութիւն տայ իրանց գործին։ Թագաւորը, բոլոր զինուորները գնում էին և երկրպագութիւն էին տալիս կուռքին։ Հերթը Գրիգորին հասաւ։ Տրդատը հրամայեց, որ նա էլ Անահտին աղօթք անէ։ Բայց Գրիգորը քրիստոնեայ էր, չուզեց կուռքին երկրպագութիւն տալ։ Տրդատը բարկացաւ Գրիգորի վրայ և հրամայեց, որ անպատճառ Անահտի առաջ աղօթէ։ Գրիգորը չուզեց։ Այն ժամանակ թագաւորին պատմեցին, որ նա իւր հօր սպանող Անակի որդին է։ Տրդատը և՛ս աւելի բարկացաւ և հրամայեց Գրիգորին խիստ պատիժ տալ—ասաց որ տանեն Արտաշատ քաղաքի Խորվիրապը ձգեն, որպէսզի այնտեղ սովից մեռնի։ Այս վիրապը լի էր բազմաթիւ օձերով և կարիճներով։ Այստեղ ձգում էին յանցաւորներին։ Գրիգորը 15 տարի մնաց այնտեղ։ Մի քրիստոնեայ կին Աստուծու հրամանով ամենայն օր մի մի հաց էր ձգում հորը, որ Գրիգորն ուտի և չմեռնի։

Տրդատը Հայաստան հասաւ. դուրս արաւ պարսիկներին և ինքն սկսաւ կառավարել։ Թագաւորը կռապաշտ էր, դրա համար էլ հրաման հանեց, որ իւր տէրութեան մէջ՝ ուր որ էլ քրիստոնեայ գտնեն, ստիպեն կուռքերին երկրպագութիւն տալու, իսկ եթէ հակառակեն, խսկոյն սպանեն նրանց։

§ 13.

ՀՌԻՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿՈՅՍԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Դիոկղետիանոս կայսրը կամենում էր իւր համար կին առնել։ Ամեն կողմ պատկերահաններ ուղարկեց, որ թագուհի լինելու արժանի աղջիկներ գտնեն. նրանց պատկերները նկարեն և իրեն բերեն։ Այս պատկերահաններից մի քանիսն էլ Հռովմ քաղաքի մօտ գտնուող կուսանոցը գնացին։ Այստեղ մի գեղեցիկ կոյս կար՝ անունը Հռիփսիմէ. սրա

պատկերն ուժով քաշեցին և կայսեր տարան։ Կայսրը հաւանեց Հռիփսիմէին և ուզում էր նրան թագուհի դարձնել։

Երբ այս բանն իմացաւ կուսանոցի մայրապետ Գայիանէն, բոլոր կոյսերին հաւաքեց և Հռիփսիմէի հետ միասին փախան, եկան Հայաստան ու Վաղարշապատ քաղաքի մի այգու հնձանում բնակուեցան։ Կոյսերից մինն ապակիէ յուլունքներ էր շինում, ծախում էին և սրանով ապրում։

Դիոկղետիանոսը խիստ բարկացաւ փախած կոյսերի վրայ. ամեն կողմ մարդ ուղարկեց, որ նրանց գտնեն։ Երբ իմացաւ, որ Հռիփսիմէն Հայաստան է փախել, մեր Տրդատ թագաւորին էլ նամակ գրեց, որի մէջ ասում էր, եթէ կոյսերին գտնէ, Հռիփսիմէին իրան ուղարկէ, միւսներին սպանէ, իսկ եթէ ցանկանայ, կարող է ամուսնանալ նրա հետ։

Կոյսերի նահատակութիւնը։ Տրդատն այս թուղթն ստանալուն պէս, իւր երկրի մէջ ամեն կողմ մարդ ուղարկեց, որ փնտռեն նրանց։ Մի քանի օրից յետոյ կոյսերին գտան։ Թագաւորը հրամայեց հնձանը զինուորներով պատել։ Պալատից թանկագին շորեր

ուղարկեց, որ հագցնեն Հռիփսիմէին և իւր մօտ բերեն, որովհետև միտք ունէր նրա հետ ամուսնանալ։ Հռիփսիմէն չէր կամենում պալատը գնալ, բայց թագաւորը իւր ծառաներին հրամայեց, որ ուժով բերեն նրան պալատ։ Թագաւորի հրամանը կատարուեց—Հռիփսիմէին քաշտալով մինչև պալատ տարան։ Հռիփսիմէն ոչ մի ձևով չհամաձայնեց թագուհի դառնալ. փախաւ և գնաց իր ընկերուհիների մօտ. պատմեց նրանց իւր գլխովն անցածը. փոքր ինչ հեռացաւ նրանցից և սկսաւ Աստուծուն աղօթել և շնորհակալութիւն անել, որ իրան այդպիսի վտանգից ազատեց։ Այդ միջոցին թագաւորի դահիճները ջահերը ձեռներին եկան. գտան Հռիփսիմէին. լեզուն կտրեցին. աչքերը հանեցին և մարմինը կտոր-կտոր արին։ Հռիփսիմէից յետոյ սպանեցին նրա 35 ընկերուհիներին մայրապետի հետ միասին։

§ 14.

Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԴՈՒՐՍ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՎԻՐԱՊԻՑ

Թագաւորն այս բանի վրայ շատ էր մըտածում. նրա խիղճը տանջում էր իրան—

հանգիստ չունէր, քունը չէր տանում։ Տը՛ր-դատը խելագարի պէս՝ վայրենի խողի նման շամբերում թափառում էր։ Թագաւորի քոյր Խոսրովադուխտը մի բարի աղջիկ էր։ Հրեշտակը սրան երազում երևեցաւ և ասաց. «Եթէ կամենում էք, որ թագաւորն առողջանայ, Գրիգորին պէտք է վիրապից հանէք. նա՛ միայն կարող է բժշկել։» Խոսրովադուխտն այս երազը նախարարներին պատմեց. նրանք չհաւատացին, ամենևին չէին կարծում, թէ Գրիգորը 15 տարի վիրապում կենդանի մնացած կլինի։ Երեք անգամ նոյն երազը կրկնուեց, յետոյ հաւատացին։ Այնուհետև Խորվիրապ գնացին, չուանը կոխ արին և ձայն տուին. «Գրիգոր, եթէ կենդանի ես, դո՛ւրս արի, Աստուած հրամայեց, որ քեզ այստեղից հանենք»։ Գրիգորը կենդանի էր։ Նրան դուրս հանեցին և Վաղարշապատ բերին։ Տրդատը և նախարարները Գրիգորի ոտներն էին ընկնում և ներողութիւն էին խնդրում։ Գրիգորը աղօթեց Աստուծուն և խնդրեց, որ իրան կարողութիւն տայ հիւանդ թագաւորին և նրա նախարարներին բժշկելու։ Սրանցից յետոյ փողոցներում թափուած կոյսերի մարմինները թաղել տուաւ։

Երկրորդ օրը նախարարները թագաւորի

հետ Գրիգորի մօտ եկան և խնդրեցին, որ ճշմարիտ հաւատը սովրեցնէ իրանց։ Գրիգորը շատ ուրախացաւ այս բարի բանի վրայ և 66 օր շարունակ քարոզում և ուսուցանում էր նրանց քրիստոնէական հաւատը։

Ս. Գրիգորի կաթողիկոս ձեռնադրուիլը։ Տրդատը, իշխանները և ժողովուրդը հաւատացել էին Քրիստոսին և ընդունել էին Քրիստոնէութիւնը. բայց ոչ քահանայ ունէին և ոչ եպիսկոպոս, որ քարոզէր և սովորեցնէր նրանց, այս պատճառով Տրդատ թագաւորը Գրիգորին Կեսարիա քաղաքն ուղարկեց, որ Ղևոնդ արքեպիսկոպոսից կաթողիկոս ձեռնադրուի և նոր քրիստոնեայ դարձած հայ ժողովրդին սովորեցնէ Քրիստոնէութիւնը։ Գրիգորը Կեսարիա գնաց. Ղևոնդը կաթողիկոս ձեռնադրեց նրան։ Վերադառնալիս Ս. Յովհաննէս Մկրտչի և Աթանագինեայ եպիսկոպոսների մասունքների մի մասը հետն առաւ՝ դարձաւ Հայաստան՝ Մուշ քաղաքի կողմերը։ Նա հետը բերաւ և շատ քահանաներ։

Այդտեղ կռատներ՝ մեհեաններ կային, բոլորն էլ քանդեց. վուռքերի սեղանները, բագինները կործանեց, նրանց տեղ եկեղեցի

շինեց և Յովհաննէս Մկրտչի մասունքն այնտեղ դրաւ։ Այս եկեղեցու անունը սուրբ Կարապետ դրաւ, ուր մինչև այսօր էլ անթիւ ուխտաւորներ են գնում։

Տրդատ Թագաւորի մկրտութիւնը։ Տրդատը, երբ իմացաւ որ Ս. Գրիգորը վերադարձել է Կեսարիայից, դուրս եկաւ նրա առաջ իշխանների և ժողովրդի հետ միասին։ Ս. Գրիգորը 30 օր ծոմ պահել տուաւ նրանց, յետոյ Թագաւորին, նրա ընտանեացը, իշխաններին և անթիւ ժողովրդեան մկրտեց Եփրատ գետի մէջ։ Ս. Գրիգորը եօթն օր մնաց այնտեղ և չորս միլիոնից աւելի մարդ մկրտեց։

Ս. Գրիգորը լուսաւորում է Հայաստանը։ Սրանից յետոյ Ս. Գրիգորը Տրդատին խորհուրդ տուաւ, որ Հայաստանում ամեն տեղ ուսումնարան բանայ, քահանաներ պատրաստէ, որ մնացած հեթանոս հայ ժողովրդին մկրտեն և հովուեն։ Այս ուսումնարաններից մի քանիսում յունարէն և մի քանիսումն էլ ասորերէն էին սովորցնում, որովհետև դեռ ևս հայերէն գրեր չունէինք։ Բացի սրանից

Ս. Գրիգորը 12 եպիսկոպոս ձեռնադրեց հայոց համար։

Ս. Գրիգորը եղաւ մեր առաջին եպիսկոպոսապետը՝ հայրապետը՝ կաթողիկոսը։ Նա Հայաստանի ամեն կողմերում ուսումնարաններ բաց անել տուաւ. այստեղից ուսումն առածները քահանաներ էին դառնում և հայերին հետզհետէ քրիստոնեայ էին դարձնում —մի խօսքով՝ Ս. Գրիգորը մեր երկիրը լուսաւորեց և դրա համար էլ նրան ասում ենք Ս. Գրիգոր (կամ երկրորդ) Լուսաւորիչ։

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Այսօր զիմանալի լուսոյն ծագողն
Ի խաւարի նստելոցս
Զգրիգորիոս սուրբ հայրապետն.
Եկայք վերապատուեսցուք։

Խաւարի մէջ նստողներիս իմանալի (մտաւոր) լոյս տուող Ս. Գրիգոր հայրապետին եկէք այսօր վերապատուենք։

Այսօր զանապական հոգւոյն պարգևս
Բաշխող որդւոց Թորգոմայ.
Ցորդիս լուսոյ նովաւ ծնեալք.
Եկայք վերապատուեսցուք։

Անապական հոգւոյ պարգևները Թորգոմայ որդւոցս բաշխողին (և) նրանից (Ս. Հոգուց) լուսոյ որդիներ ծնածներս, եկէք վերապատուենք։

Այսօր զաստուածային բանին պատմող
Ի Հայաստան աշխարհի.
Աշակերտեալ նմա մանկունք.
Եկայք վերապատուեսցուք:

Հայաստան աշխարհում Աստուծու խօսքը քարոզողին, ով նրան աշակերտող մանուկներ, եկէք այսօր վերապատուենք:

Այսօր երգէ եկեղեցի որդւովք իւրովք
Ընդ հրեշտակս.
Ցիշատակի Լուսաւորչին
Փառք ի բարձունս Աստուծոյ:

Այսօր եկեղեցին իւր որդկերանցով հրեշտակների հետ միասին՝ Լուսաւորչի յիշատակի համար՝ երգում է—«Փառք ի բարձունս Աստուծոյ»:

§ 15.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՐԱԶԸ

Ս. Գրիգոր Լուսաւորիչը մի անգամ երազում տեսաւ, որ երկինքը բացուեց և սկսաւ այնտեղից լոյս իջնել դէպի երկիրը: Լուսի հետ միասին իջաւ մի մարդ—դա Աստուծու միածին որդին էր—ձեռին բռնած ոսկէ ուռն: Այս մարդը իջաւ վաղարշապատ քաղաքի մէջ տեղը և գետնին ուռով խփեց: Իսկոյն գետնի տակից՝ այսինքն անդնդից սարսափելի ձայներ լսուեցան: Սրանից յետոյ թագաւորի պալատի վրայ երևաց ոսկէ խարիսխ, որի մեծութիւնը մի մեծ բլրի չափ էր: Այս խարսխի վրայ կրակէ սիւն կար. սիւնի վրայ ամպեղէն գմբէթ՝ եկեղեցու նման, իսկ գմբէթի վրայ էլ՝ լուսաւոր խաչ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը զարմացած նայում էր և չգիտէր, թէ ինչ նշանակութիւն ունին այս ամենը: Աստուծու հրեշտակն իջաւ երկնքից և մեկնեց Ս. Գրիգորին նրա երազը: Հրեշտակն ասաց—այն մարդը, որ ձեռին ոսկէ ուռն ունէր բռնած՝ Աստուծու որդի Յիսուս Քրիստոսն (Միածին) էր. հրեղէն սիւնը՝ Կաթողիկէ եկեղեցին, այսինքն այժմեան Էջմիածնի տաճարը, իսկ լուսաւոր խաչը՝ հայոց քահանայապետութիւնը, այսինքն կաթողիկոսութիւնն է: Հրեշտակը յայտնեց, որ այս ուռով խփած տեղը եկեղեցի պիտի շինել, այնտեղ պիտի աղօթեն բոլոր քրիստոնեաները. հայոց կաթողիկոսի աթոռն այդտեղ պիտի հաստատուի, այսինքն հայոց կաթողիկոսներն այդտեղ պիտի նստեն:

§ 16.

ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Միւս օրը Ս. Գրիգորը պատմեց այս ե-

բազը Տրդատ թագաւորին, նախարարներին, ժողովրդին և պատուիրեց, որ հրեշտակի ցոյց տուած տեղի չորս կողմը քարէ պատ քաշեն։ Ս. Գրիգորն այդ երազը թագաւորին և նրա նախարարներին մկրտելուց առաջ էր տեսել։ Երբ թագաւորական տունը և ժողովրդին մկրտեց, Վաղարշապատ դարձաւ և Միածնի իջած տեղում 303 թուին մի եկեղեցի շինեց այն ձևով՝ ինչպէս որ տեսել էր։ Այս եկեղեցին առաջ Շ ո ղ ո կ ա թ էր կոչւում*), որովհետև լոյսը, այսինքն շ ո ղ ը այդտեղ կ ա թ ե ց։ Այժմ այլ ևս Շողակաթ չեն ասում, այլ՝ Է ջ մ ի ա ծ ի ն, որ նշանակում է թէ այնտեղ ի ջ ա ւ Մ ի ա ծ ի ն ը՝ Յիսուս Քրիստոսը։ Եկեղեցու շինութեան վրայ աշխատում էին ոչ թէ միայն ժողովուրդը՝ այլև թագաւորն ինքը, Աշխէն թագուհին, թագաւորի որդին, քոյրը, նախարարներն ու իշխանները։ Բացի Էջմիածնից Ս. Լուսաւորիչը ուրիշ եկեղեցիներ էլ շինեց—մինը Գայիանէ կոյսի անունով, միւսը Հռիփսիմէի և սրանցում թաղեց նրանց մարմինները, իսկ երրորդ եկեղեցին

*) Այժմ ևս Շողակաթ է կոչւում տաճարի առաջ սեսանը, իսկ կաթողիկէի միջնակէտը՝ Իջման տեղ, որի վրայ պատարագ է մատուցանւում Էջմիածնայ և ուրիշ հանդիսաւոր տօներին։

հնձանի տեղում շինեց, որն այժմ կոչւում է Շողակաթ։

Ս. Էջմիածինը 303 թուից սկսած բոլոր հայերի մայր եկեղեցին է. այնտեղ է նստում հայոց կաթողիկոսը։

Ս. Էջմիածնի հիմնարկութիւնը մեր եկեղեցին տօնում է Հոգեգալստից երկու շաբաթ յետոյ։

ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Է՛ջ Միածինն ի Հօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա,
Զայնք հնչեցին
Սանդարամետք անդնդոց։

Միածինը (Յիսուս) լուսով պատած իջաւ Հօրից (երկնքից), սանդարամետի (դժոխքի) անդնդից ձայներ լսուեցան։

Տեսեալ զլոյս
Մեծ հայրապետին Գրիգորի.
Պատմէր ցնծութեամբ
Հաւատացեալ արքային։

Մեծ հայրապետ Գրիգորը լոյսը տեսնելով՝ ուրախութիւնով պատմում էր հաւատացեալ թագաւորին։

Նկայք շինեսցուք
Սուրբ զխորանն լուսոյ,

Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի։

Եկէք լուսոյ սուրբ խորանը (սեղան, եկեղեցի) չինենք, որովհետև Հայաստան աշխարհի մէջ այստեղ լոյս ծագեց մեզ համար։

Բարեխօսութեամբ վերին քո զօրաց,
Միշտ անշարժ պահեա՛ զաթոռ հայկազնեաց։

Քո վերին զօրքերի (հրեշտակների) բարեխօսութիւնով միշտ անշարժ պահիր հայկազունների աթոռը (հայոց եկեղեցին, Էջմիածինը)։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևոյթից։

Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած։

Նոյն ինքն՝ ի ընութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով։

Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի, ի միմկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից, հոգւոց և մարմնոց՝

յարքայութիւն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն էր երբեմն յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգի կամ թէ յոչէիցն եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զանպիսիսն նզովէ կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցի։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ Երրորդութեան և միոյ աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Հաւատում ենք մի Աստուած, ամենակալ Հօրը, երկինքն ու երկիրը, երևելիների և աներևոյթների Ստեղծողին,

(Հաւատում ենք) և մի Տէր Յիսուս Քրիստոս Աստուծու որդուն, որ հայր Աստուածանից է ծնել միածին, այսինքն Հօր էութիւնից է։

Աստուած է՝ Աստուածանից, Լոյս է՝ Լուսից, ճշմարիտ Աստուածէ, ճշմարիտ Աստուծուց ծնած և ոչ թէ ստեղծուած,

Նոյն ինքն Հօր (Աստուծու) բնութիւնից է, որով ամեն բան եղաւ երկնքի մէջ և երկրիս վրայ երևելիներն ու աներևոյթները։

Որ մեզ մարդկանցս համար և մեր փրկութեան համար, երկնքից իջնելով՝ մարմին առաւ, մարդ եղաւ և ծնաւ կատարեալ կերպով սուրբ կոյս Մարիամից՝ Հոգւով սրբով։

Որով (Ս. Հոգւով) առաւ մարմին, հոգի և այն ամենն՝ ինչ կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով։

Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ և նոյն մարմնով երկինք բարձրանալով՝ Հօր աջ կողմը նստաւ։

Պէտք է դայ նոյն մարմնով և Հօր փառքով կենդանիներին ու մեռածներին դատելու համար, որի թագաւորութեան վերջ չկայ։

Հաւատում ենք ս. Հոգուն, որ անեղ (ոչ ոքից չէ եղել) և կատարեալ Աստուած է, որ խօսեց օրինաց և մարգարէների և աւետարանների միջոցով։ Որ Յորդանան գետն իջաւ՝ Առաքողին (Քրիստոսին՝ Աստուածանից ուղարկուածին) քարոզեց և սուրբերի մէջ բնակուեցաւ։

Հաւատում ենք նաև միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի, մի մկրտութեան, ապաշխարութեան, մեղաց քաւութեան, մեռելների յարութեան, հոգիների և մարմինների վերջին դատաստանին, երկնքի արքայութեան և յաւիտենական կեանքին։

Իսկ նրանք, որոնք ասում են՝ թէ կար ժամանակ, երբ չկար Աստուծուն որդի, կամ ասում են, թէ կար ժամանակ, երբ Ս. Հոգին չկար, կամ ասում են, թէ Աստուծու որդին կամ Ս. Հոգին ոչնչից գոյացած և հօր Աստուծու էութիւնից չեն, այլ ուրիշ էութիւնից են եղած, և կամ թէ կարող են փոփոխուել և այլայլել։ Այսպիսի հերետիկոսական խօսքեր ասողներին նզովում է Կաթողիկէ և Առաքելական սուրբ եկեղեցին։

Իսկ մենք փառաւորում ենք յաւիտենից առաջ եղողին՝ երկրպագելով Ս. Երրորդութեան և մի Աստուածութեան—Հօր, Որդւոյ և Ս. Հոգւոյն՝ այժմ, միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Մարմին տէրունական եւ արիւն փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով—Սուրբ, Սուրբ, Սուրբ տէր զօրութեանց:

Տէրունական Մարմինը և փրկչական Արիւնը առաջներս դրած է, երկնային զօրքերն (հրեշտակները), աներևոյթ կերպով երգում են և ասում շարունակ - Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց։

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ:
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջունի հրաման տուաւ։
Եկեղեցիս մի անձն եղեւ.
Համբոյրս յօղ լրման տուաւ:
Թշնամութիւնն հեռացաւ.
Սէր յընդհանուրս սփռեցաւ։
Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն՝
Տուք օրհնութիւն ի մի ընդան.
Միասնական աստուածութեան,
Որում Սրովբէքն սրբաբան:

Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, Որ էն Աստուածն այստեղ (սեղանի վրայ) բազմեցաւ։ Խաղաղութեան ձայն լսուեցաւ, սուրբ ողջունի հրաման տրուեցաւ։ Եկեղեցիս (բոլոր քրիստոնեաների ժողովը) մի սիրտ—մի հոգի դարձաւ և այս ողջոյնի համբոյրը միութեան կապ եղաւ։ Թշնամութիւնը հեռացաւ. Քրիստոսի սէրն ամենիս մէջ տարածուեց։ Ուրեմն, ով պաշտօնեաներ, ձայներդ բարձրացնելով, միաբերան օրհնութիւն տուէք միասնական Աստուածութեանը, որին Սրովբէները փառաբանում են։

Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ՝ բաշխելով

զմարմինն եւ զարիւն ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Շնորհակալ ենք քեզնից, ով Տէր, որ մեզ կերակրեցիր քո անմահական սեղանիցը, բաշխելով քո Մարմինն ու Արիւնը՝ աշխարհի փրկութեան և մեր անձին կեանք լինելու համար:

Սուրբ, Սուրբ, Սուրբ տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո: Օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ որ եկիր եւ գալոցդ ես անուամբ տեառն: Ովսաննա ի բարձունս:

Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, երկինքն ու երկիրը լիքն են քո փառքերով: Օրհնութիւն լինի բարձրումը. օրհնեալ ես որ եկար և պիտի գաս Տիրոջ անունով: Ովսաննա բարձրումը:

Арм.
2-6304а

Իմ աշխատութիւններն ստանալ ցանկացողները կարող են դիմել՝ 1) Тифлисъ: армянскому свящ. Сааку Саакянцъ, 2) Կենդրոնական գրավաճառանոց։

	Ռ.	Կ.
ՍՏՈՐԻՆ ՇՐՋԱՆ		
ՈՒՅՈՒՑԱՅ ՀԱՄԱՐ		
1. *Դասագիրք կրօնի հին-ուխտ.* . .	1	75
2. *Դասագիրք կրօնի նոր-ուխտ* . . .	2	5
3. *Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին*	—	10
ԱՇԱԿԵՐՏԱՅ ՀԱՄԱՐ		
4. *Սրբազան պատմութիւն հին ուխտի գ. տիպ V տարի*		40
5. *Սրբազան պատմութիւն նոր-ուխտի բ. տիպ IV տարի*	—	40
6. *Դասատետր կրօնի գ. տիպ III տարի*	—	30
7. *Դասատետր կրօնի ե. տիպ II տարի*	—	20
8. *Դասատետր կրօնի գ. տիպ I տարի*	—	15

Ինձ դիմողներ և էպեսիկոպոսարանները կստանան 20% զիջումն։ Ճանապարհածախսն ինձ վրայ չէ։

403

0026896

403

2013